ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՀԱՋԱՆԳ

ԿԻՆ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՅՆԵՐԸ.

նրանք Հայաստանում փախստականների ճգնաժամին առաջին արձագանքողներից են:

Հայաստանում փախստականներին ուղղված արձագանքի շրջանակներում կարևորելով գենդերային հատուկ կարիքներն ու առաջնահերթությունները

Photo: @UN Armenia/Avedisiian

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.

Այս գենդերային ահազանգի նպատակն է ներկայացնել այն նախնական ուղերձները, որոնք փոխանցել են Հայաստանում փախստականների ճգնաժամին արձագանքման գործընթացում ակտիվորեն ներգրավված կանանց կազմակերպությունները: Այս տեղեկությունները «ՄԱԿ կանայք» կազմակերպությանը ներկայացվել են հազարավոր էթնիկ հայերի՝ դեպի Հայաստան տեղահանման առաջին օրերի ընթացքում, որին նախորդել էր ինն ամիս տևած շրջափակումը. այն տարածաշրջանում տասնամյակներ տևող հակամարտության և մեկուսացման վերջին ստացումներից էր: Կարևոր է արձանագրել, որ այս տեղեկությունները սպառիչ չեն. հիմնական նպատակն է պատկերացում տալ փախստականների ներկայիս վիճակի վերաբերյալ և ուշադրության արժանացնել նրանց հատուկ կարիքները գենդերային և բազմազանության սկզբունքի տեսակետից: Իրավիճակի զարգացմանը և ավելի շատ տվյալների ստացմանը զուգահեռ՝ անհրաժեշտ կլինի առավել խորքային վերլուծություն:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ



ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ



ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Փախստականների պաշտպանությունն ապահովելու և կենսական կարիքները բավարարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ղեկավարում է արձագանքման միջոցառումները՝ այդ թվում և միջնաժամկետ, և երկարաժամկետ կտրվածքով: ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը համակարգում է փախստականների խնդիրներին արձագանքող 2023 թ. հոկտեմբերից մինչև 2024 թ. մարտ ժամանակահատվածում նախատեսված «Հայաստանի միջգործակալական արձագանքման ծրագիրը»՝ սերտորեն համագործակցելով և համակարգելով այն ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի հետ: Փախստականների հարցերի համակարգման շրջանակներում գործող գենդերային հանձնախումբը միջգերատեսչական աշխատանքների համակարգման ընթացքում կհետևի, որպեսզի ոլորտային և ենթաոլորտային աշխատանքային բոլոր խմբերը կատարեն գենդերային հավասարությանը և ներառմանը ուղղված իրենց պարտավորությունները:

Գործողությունների ծրագիրը կաջակցի ազգային և տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների առարկայական մասնակցությանն ու նրանց կողմից աշխատանքների ղեկավարմանը՝ հատկապես կանանց կողմից ղեկավարվող կազմակերպությունների, կանանց իրավապաշտպան կազմակերպությունների և փոքրամասնությունների հարցերով զբաղվող իրավապաշտպան խմբերի կողմից՝ ճկուն ֆինանսավորման, կարողությունների զարգացման և մարդասիրական օգնությունը համակարգող կառույցներից օգտվելու հնարավորությունների միջոցով:

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ.

- 2023 թ. սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 3-ը Հայաստանի բոլոր **11 մարզերում** ճգնաժամին արձագանքող **14 տեղական կանանց կազմակերպությունների** հետ «ՄԱԿ կանայք»-ի կազմակերպած նախնական խորհրդակցությունները հաստատեցին Հայաստան եկած փախստականներին և նրանց անմիջական օգնություն տրամադրող կազմակերպություններին հրատապ աջակցության կարիքը:
- 2020 թվականի ռազմական գործողությունների ընթացքում Հայաստան եկած մարդկանց մոտավորապես 80%-ը կանայք և երեխաներ էին: Սակայն այս անգամ մարդիկ հեռացել են ընտանիքներով՝ առանց վերադառնալու ակնկալիքի: 2023 թվականի սեպտեմբերի 24-ից ՀՀ կառավարությունը հայտնել է մոտավորապես **100,632[1] նոր փախստականների ժամանման մասին:** Ըստ սեռի և գենդերի բաշխվածությունը համեմատաբար համամասնական է՝ բացառությամբ ժամանած 65 տարեկան և բարձր տարիքի կանանց, որոնք մեծաթիվ են:
- Այս իրավիճակը ծայրաստիճան անհանգստացնող է և խորը հոգեբանական հետևանքներ կունենա, որը հարցվածները որակել են որպես «**կոլեկտիվ տրավմա**»: Այդ իսկ պատճառով անհապաղ անհրաժեշտ է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը կպահանջվի նաև միջնաժամկետից երկարաժամկետ հեռանկարում: Ճգնաժամի հաղթահարման առաջնագծում աշխատողներին, որոնք հաճախ կանայք են, ևս հոգեբանական աջակցություն է անհրաժեշտ:
- Իննամսյա շրջափակումից հետո, որի ընթացքում չեն ապահովվել բնակչության հիմնական կարիքները՝ հանգեցնելով թերսնուցման, վիժումների, բուժսպասարկման բացակայության և այլ դեպքերի, փախստականները գալիս են սուր և քրոնիկական **առողջական խնդիրներով և կարիքներով**:
- Սննդի, հիգիենայի և այլ առաջնային պարագաները տրամադրվում են կառավարության և տեղում գործող կազմակերպությունների կողմից, այդ թվում՝ կանանց կազմակերպությունների, որոնք **աջակցության աշխատանքների առաջնագծում են**. այդուամենայնիվ, կարիքները մեծ են և լրացուցիչ աջակցություն է անհրաժեշտ:

«Կանայք ծանր հոգեբանական վիճակում են, նրանք վախեցած են և անորոշության մեջ: Նրանց պետք է առաջին անհրաժեշտության գրեթե ամեն ինչ»:

Լիանա Սահակյան, «Սոսե» ՀԿ, Գորիս

- Շատ փախստականներ Հայաստան հասնելու համար ավելի քան 30 ժամ ճանապարհին են եղել, և այդ ընթացքում կանայք և աղջիկները զրկված են եղել անհրաժեշտ սանիտարական պայմաններից ու ենթակա են եղել **գենդերահեն բռնության բարձր ռիսկի: Պաշտպանության ծառայություններ** են անհրաժեշտ հյուրընկալող շրջաններում նրանց ժամանման պահից՝ անհրաժեշտ աջակցությունը տրամադրելու համար:

1 2023 թ. հոկտեմբերի 5-ի դրությամբ, ըստ պետական աղբյուրների:

“Ի լրումն առաջին անհրաժեշտության պարագաների՝ կանանց նաև անհրաժեշտ է համակողմանի, տրավմաների հաղթահարմանն ուղղված վերականգնողական միջամտություն: Դա վերաբերում է նրանց առողջական կարիքներին, զբաղվածության հնարավորություններին և հոգեկան առողջությանը, ինչպես նաև գենդերահեն և սեռական բռնության դեպքերի մշտադիտարկմանը, որոնց նրանք հնարավոր է ենթարկված լինեն տարհանման ընթացքում»:

Գայանե Համբարձումյան «Կանանց կենտրոն. Շուշի», փախստական կնոջ կողմից ղեկավարվող ՀԿ

- Հայտնի է, որ էթնիկ հայ փախստականներն ունեն **տարբերվող մշակույթ և բարբառ**, որոնք հնարավոր է անդրադառնան ընդունող համայնքներում նրանց ինտեգրման ընթացքի վրա:
- Հակամարտությունից տուժած հասարակությունում տղամարդիկ հատուկ ճնշման են ենթարկվում ռազմականացման համատեքստում, իսկ կանայք հնարավոր է իրենց անկարող զգան գենդերահեն բռնության տարբեր ձևերի վերաբերյալ հաղորդում տալու հարցում՝ պայմանավորված **գենդերային դերերի մասին ընկալումների սոցիալական նորմերով:**
- Ակնկալվում է, որ **գենդերահեն բռնության** ցուցանիշը մեծապես կբարձրանա՝ պայմանավորված կենսապայմանների կորստով, լարված պայմաններով և հոգեբանական խնդիրներով: Գենդերահեն բռնության մեղմացման, կանխման ու արձագանքման ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների փոխանակումն ու մասշտաբայնացումը չափազանց կարևոր է:

«Գենդերային կրթության պակասի հետևանքով կանայք չեն կարողանում ճանաչել, անվանել և հաղորդում տալ գենդերահեն բռնության դեպքերի վերաբերյալ: Այս վճռորոշ պահին ծառայությունների տրամադրումը պետք է ուղեկցվի իրազեկության բարձրացմամբ ու կրթությամբ»:

Քնարիկ Մկրտչյան, «Կանանց օրակարգ ՀԿ», Երևան

- Հումանիտար արձագանքման գործընթացում **տղամարդկանց և տղաների հետ աշխատանքի** կարևորությունը ևս կարևորվել է որպես գենդերահեն բռնության կանխման և գենդերային փոխակերպող մոտեցումների առանցքային ռազմավարություն:
- Պատշաճ ապաստարանը, որն ունի **սեռերի համար առանձնացված սանհանգույցները** և անվտանգության համապատասխան միջոցառումներ, առանցքային դեր ունի ժամանակավոր և չհաշվառված կացարաններում պաշտպանության հատուկ կարիքները հասցեագրելու համար:
- Կառավարությունն առաջարկել է **ժամանակավոր կացարաններ**, սակայն օգտվողների թիվը փոքր է, քանի որ փախստականները նախընտրում են չգնալ սահմանամերձ շրջաններ՝ վախենալով հակամարտության հետագա սրացումից և իրենց ավելի ապահով են զգում մայրաքաղաքում, որտեղ ակնկալում են աշխատանքի ավելի լավ հնարավորություններ: Բացի այդ, տրամադրված կացարանները միշտ չէ որ համապատասխանում են նվազագույն սանիտարահիգիենիկ պահանջներին կամ միշտ չէ որ ապահովված են տարրական կահույքով կամ սննդի պատրաստման սարքերով:

- Մինչ այժմ փախստականները բնակվում են կառավարության տրամադրած վայրերում, հյուրանոցներում, հյուրընկալող ընտանիքներում կամ իրենց հարազատների մոտ: Սպասվում է, որ հեռանկարում կացարանի ապահովումը երկարաժամկետ առումով լինելու է առանցքային հարցը:

- Հայտարարվել է **դրամական** աջակցության պետական ծրագիր՝ կացարանների վարձակալման ծախսերի փոխհատուցման նպատակով. այդուհանդերձ, այս աջակցությունը ժամանակավոր է և պետք է փորձել երկարաժամկետ լուծումներ գտնել, հակառակ պարագայում հատկապես վտանգված կարող են լինել կանայք, ովքեր հանդիսանում են տնային տնտեսությունների գլխավոր:

- Փոքրաթիվ ռեսուրսներ ունեցող կանանց շրջանում ավելի բարձր է **հաղթահարման բացասական մեխանիզմներ** որդեգրելու միտումները: Դրանցից կարող են լինել հանուն գոյատևման սեռական հարաբերությունների մեջ մտնելը և աղջիկների՝ դպրոց չհաճախելը երեխաներին խնամելու նպատակով, մինչ նրանց ծնողներն աշխատում են, ինչի մասին արձանագրումներ եղել են նաև 2020 թ. ճգնաժամի ընթացքում:

- Կանանց կազմակերպությունների ներկայացուցիչները շեշտել են, որ անհրաժեշտ է ապահովել կանանց ներգրավվածությունը **ճգնաժամերի կառավարման և արտակարգ իրավիճակներին արձագանքման** գործընթացում՝ որպես նախորդ ճգնաժամից քաղված դաս:

- Փախստականների 9%-ն այժմ հաշվառված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում (ԱՍՀՆ)[2], բայց հաշվառված անձանց տվյալները չեն տրամադրվում արձագանքող կողմերին: Բացի այդ, ժամանողների ընդունումը կազմակերպում է ՀՀ կառավարությունը կամ նրանք ինքնաուղղորդվում են Հայաստանի բոլոր մարզեր: Դա կարող է դժվարացնել **խոցելի անձանց նույնականացման և աջակցման գործընթացը**, հատկապես որ ակնկալվում է երկրորդային/կրկնակի ներքին միգրացիա՝ պայմանավորված գյուղական շրջաններում սոցիալական ցանցերի և կենսապայմանների պակասով:

- Որոշ երեխաներ շրջափակման հետևանքով երկար ժամանակ **դուրս են մնացել կրթությունից** և, ըստ ամենայնի, արտադպրոցական, աջակցող միջոցառումների կարիք կունենան: Կանանց կազմակերպությունները հայտնում են, որ եկողների համար կրթական նյութերը բավարար չեն, և հագուստի ու կոշիկների պակասը դիտարկվել է երեխաների դպրոց գնալու որպես խոչընդոտ:

- Երկրում գործազրկության բարձր մակարդակի և երեխաների խնամքի տարբերակների սահմանափակ հասանելիության պատճառով՝ կանանց համար **արժանապատիվ աշխատանքի և երեխաների խնամքի հաստատությունների հասանելիությունը** դիտարկվում է որպես գերկարևոր առաջնահերթություն: Այդուհանդերձ, նախ անհրաժեշտ է, որպեսզի կանայք կարողանան **հաղթահարել հոգեբանական տրավմանները**, որից հետո միայն հնարավոր կլինի սկսել հմտությունների զարգացման և աշխատանքի տեղավորման մասով գործընթացները:

- **Տարեց մարդիկ**, հատկապես միայնակ եկածներն ու ծանոթ-հարազատ չունեցողները, հասցեական աջակցության կարիք ունեն, օրինակ՝ ինչպես դիմել բուժսպասարկման ծառայություններ, դիմել պետական տարատեսակ ծառայություններից օգտվելու համար և դիմել համապատասխան կացարան ստանալու

2 Հոկտեմբերի 3-ի դրությամբ, 91,924 մարդ է գրանցվել պետական մարմինների կողմից, ինչպես հայտնում է ՀՀ կառավարությունը:

համար: Տարեց փախստականների և ընդունող համայնքների հատուկ կարիքները բավարարելու նպատակով տարեցների բնակապահովման անհրաժեշտություն կլինի:

- **Հաշմանդամություն ունեցող որոշ անձինք** ի վիճակի չեն եղել մեկնել իրենց ընտանիքների հետ և Հայաստան են հասել ԿԽՄԿ-ի օգնությամբ: Առկա սահմանափակ ռեսուրսների, այդ թվում՝ համապատասխան կացարանների և հասցեական սահմանափակ աջակցության պայմաններում այս մարդիկ անտեսված լինելու կամ անհարկիորեն հաստատություններում տեղավորվելու հետագա ռիսկի են ենթարկվելու և նրանց մասնագիտական երկարաժամկետ օժանդակություն է անհրաժեշտ լինելու:
- 2020 թվականին ստեղծված մի շարք **համայնքահեն մեխանիզմներ ու աջակցության խմբեր** այժմ վերագործարկվել են, ինչը թույլ է տվել ապահովել արագ և համակարգված արձագանք: Շատ կարևոր է տեղական քաղաքացիական հասարակության, հատկապես կանանց կողմից ղեկավարվող կազմակերպություններին ներգրավել **կարիքների գնահատման** և արձագանքման աշխատանքների առավել համապատասխանեցման համար՝ ամենախոցելի անձանց, այդ թվում՝ կանանց և աղջիկների, հաշմանդամություն ունեցող անձանց ու մարգինալացված խմբերի ի հայտ եկող կարիքներն ու առաջնահերթություններն ավելի լավ հասկանալու համար: